

զբաղումներուս, որոնք շատ ուշ կը զգացնեն ինձ ծունկերս ու կուշտերս ասղնող ոլորտին անբերելի ծանրութիւնը, պանդխտութեանս մաշումը կ'օծեմ կոլտի յուշքովն ալ, թէ իրեն նուիրուած այս էջերով եւ թէ իրեն պէս մշտախօս եւ յորդ քարոզիչներ լսած սալ բեմով: Եւ որպէս զի պատմագրական անաչառ ու անկաչառ վերջաւորութիւն մը տամ այս յաւելուածներուն՝ քանի մը տող ալ պէտք է որ նուիրեմ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն եւ կեդրոնական Վարժարանին Պատ. Խնամակալութեան. որովհետեւ թէ պաշտօնակցութիւն մը կայ, թէեւ իրարմէ անկախ, եւ թէ մանաւանդ պէտք է որ իբր ժամանակակից՝ պամագրողի պարտքս կատարեմ:

Արդի Խնամակալութիւնը կազմուեցաւ Մաղաքիա Պատրիարքի նախաձեռնութեամբ: — Ս. Պատրիարքը, Ս. Լուսաւորչի համար մասնաւոր սէր մ'ունի. վասն զի իր առաջին քարոզները այս տեղ խօսած է 1879ի Նոյեմբերէն սկսելով, վեց ամիս եւ դասախօսած է նոյն ատեն կեդրոնականի մէջ: Մինչեւ հիմայ կը պահէ առաջին յիշատակները եւ յարմար առիթներով կու գայ քարոզել Ս. Լուսաւորչի բեմէն: — Իր Պատրիարքութեան առաջին ամիսներուն ուշադրութիւն դարձուց Ս. Լուսաւորչի վրայ, որ անկերպարան վիճակի մը մատնուած էր եւ 1896 Դեկտեմբերին Խնամակալութեան պաշտօնի կոչուեցան Իսաեան Յովն (վաճառական), Հարէնց Մարտիրոս (վաճառական), Մարտիրոս Յովնանեան (երբեմն պաշտօնեայ, հիմայ ուսուցիչ). իսկ 1897, Յուլիսին՝ այս մարմինը ուժաւորուեցաւ սա նոր յաւելումներով. — Ասաեան Մարտիրոս (փաստաբան), Ասատուր Հրանց (փաստաբան, ուսուցիչ). Եսայի Յովն (պաշտօնեայ, ուսուցիչ), Յովն Յովն (փաստաբան):

1 Այս անձը իր ծանր զբաղումներուն հետեւանքով չէ կրցած աշակցիլ Խնամակալութեան աշխատութիւններուն: